

կին համեմատ ալ կրնայ խնայութիւն ընել։ Դանցած երիտասարդներէս մէկը օր մը ըստ ասաւ . “ Ի՞նչ որ ուզէի , աս մէկ երկու տարուանս մէջ 10 կամ 12 հազար դաշեկան մէկդի կը դնէի . բայց ինչ կ'ելլէ անկից . մարդս իր զուարձութիւնն ալ նայելու է , : Խս շատ անգամ իրաւունք տուի աս խօսքիս մոքիս մէջ , ըսելով թէ երիտասարդութիւնը թերեւս ասանկ կը պահանջէ . բայց աս ալ կը մտածեմ՝ թէ ալ աղէկ չէր որ նոյն երիտասարդը 10 հազարին նույն մէկդի դնէր ու դնէ միշտ իր ապագայ երջանկութեանը համար . ու մնացած նույն դարձեալ իր զուարձութեանցը գործածէ : Խրկայն բարակ բարոյական վարդապետութիւններ ընել հարկ չէ . սակայն այսչափ կ'ուզեմիմացընել , որ շատ անգամ այլ և այլ գիտութիւններ ալ բարոյականի համաձայն գալով՝ անոր պահանջածը կը պահանջեն՝ մարդկային ընկերութեան երջանկութեանը համար :

Որոնք որ ինչք ունին , անոնք դիւրաւ խնայութիւն կրնան ընել , ու իրենց ինչքը շատոցընել . զոր օրինակ ընչից տէր՝ մը որ ուրիշին շահով ստակ կուտայ , կրնայ առած շահին ութը տասը հազարը մէկդի դնել , նոր զրամագլուխ ընել անիկայ . կամ կալուածատէր մը վաստըկածին մէկ մասը դարձեալ իր երկրին վրայ պատկեցընելով՝ անոր գինը շատոցընել , կամ անով ուրիշ երկիր մըն ալ գնել : Ամըսչէքով կամ աւուրչէքով աշխատող մարդիկ հարկաւ աւելի պիտի ջանան խնայութիւն ընելու . բայց քիչ ատենէն կ'ուրախանան իրենց քաշած կտոր մը նեղութիւններնուն վրայ : Արայն խեղճ՝ աղքատաց մեծ դիւրութիւն ու միսիթարութիւն կ'ըլլար՝ թէ որ մեր կողմերն ալ խնայութեան գանձարան կամ անոր նման բարեգործութեան միջոցներ ըլլային :

Ի՞նչ որ մէկը խնայած ստակը ետքը իրեն ուրիշ պիտոյիցը կը գործածէ , ու բերք չհաներ անով՝ ան խնայեալ ստա-

կը ինչք ըստուիր . և միակերպ գործածուելով քիչ ատենի մէջ կը լմբննայ : Են մարդը որ խնայած ստակը բերքի կը գործածէ , ու միայն անկից վաստըկածը կ'ուտէ , իրեն ընչիցը չափը նոյն մնալով , իր վիճակն ալ նոյն կը մնայ : Շահահ մարդիկ , որ խնայութիւն ընելով իրենց ստակը կը ծածկեն , ընկերութեան մեծ վնաս կ'ընեն . որովհետեւ այնչափ ստակ երկայն ժամանակ անգործ մնալով՝ ընկերութիւնը կը զըրկուի շատ տեսակ բերքերէ , որ անստակներով կրնային ելլել :

Ենմիջապէս ընչից ետևէն խնայութեան վրայ խօսենուս պատճառը ան է որ ընչից հետ շատ վերաբերութիւն ունի , և ուրիշ տեղ չենք կրնար խօսիլ աս նիւթիս վրայ . իսկ ասանկ առանձին հատուածով երկնցընելիս անոր համար է որ իմացընենք մեր ազգայնոց՝ թէ հայոց ազգին պէս խիստ չափաւոր հարստութիւն ունեցող ազգ մը պէտք չէ որ իր վաստըկածը անխնայ շւայլութեան և սակաւատեւ ապրանքներու վատնէ :

Հ . Տ . Թ

ԲՆԱԿԱՆ Գ. ՏՏՈՒԹԻՒՆ


ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ի՞նչ և Ի՞նչառիծ :

ԿԱՏԱՂԻ գազաններուն մէջ զլսաւորներէն են աս երկու տեսակները , բայց թէ ինձը և ընձառիւծը իրարմէ ինչ տարբերութիւն ունին՝ որոշ չփառուիր :

Ինձը շատ կը գտնուի Ամբիկէի ամէն տեղուանքը և Ամիոյ տաք կողմերը . մորթը շատ գեղեցիկ է , կանակը դե-

ւ Մեր նախնիք ինչ կամ ի՞չ բառը միայն կը գործածէն , որ կ'երենայ թէ տաճկերէն գործած և կար , ու գաղղիարէն բանիեր ըստուած կենդանին կը նշանակէ : Ընծառիծ բառը ետքերը հարուած է իբրև գաղղիարէն léopard ըստուածին թարգմանութիւն :



ԱԵՆԵՒԹԵԼԻ ԲԱՀԱԿԱՆԻՑ :

զին՝ փորը ճերմակ, ու երկու կողերը վեց վեց կամ եօլժնական կարգ սև խայտուցներով զարդարուած. աս խայտուցները վարդաձեւ կ'երենան, վասն զի հինգ վեց հատ մանր պարզ պիտակներ իրարու քով եկած ու անանկ ձեացած են:

Ծարքովը շատ նման է կատուի. անոր պէս կը յարձըկի մանր կենդանեաց վրայ, ու ծառերէն վեր համարձակ կ'ելլէ ու կ'իջնայ:

Ինձառիւծը կ'երենայ թէ վերինին մէկ տեսակն է ու աւելի շատ խայտուց ունի: Վչոր ալ մէկ տեսակը կայ որ

Հնդկաստանցիք ու Վշրիկեցիք կ'ընտանեցրնեն ու որսի կը գործածեն, և ան է հոս գլոււած պատկերին մէջինը:



Աւելի գիւղին է որ ինձը խայտուցը փոխէ՝ քան թէ մարդ իր բնութիւնը:

Կրթութեամբ մարդուս բնութիւնը կը կոկուի. բայց ոչ երբէք կը փոխուի:

